ՌԱԲԻՍ

Այս ժանրի ներկայացուցիչներն ու նրանց ունկնդիրները պաշտոնապես համարվում են մարգինալ շերտ, իսկ երաժշտությունը՝ համապատասխանաբար, մարգինալ:

Մարգինալ (լատ.՝ margo – ծայր, սահման, անգլ.՝ marginal – ծայրամասում գտնվող, նվազագույն, աննկատելի), հասարակության շրջանում սոցիալական անկարողություն ու դեգրադացիա (լատ.՝ degradacja – աստիճանական անկում), օտարացում:

Ռաբիս ժանրի երաժիշտներին թույլ չէին տալիս մուտք գործել ռադիո և հեռուստատեսություն, նրանց ստեղծագործությունները չէին լուսաբանվում լրատվամիջոցներով: Ռաբիսը տարածվում էր երեկույթներին և այլ տոնակատարություններին կատարելու միջոցով: 1980-ականներին ռաբիսը նոր թափ է առնում և տարածվում է բնակչության մեծամասնության շրջանում:

1990-ական թվերին ռաբիս երաժշտությունն ավելի զանգվածային է դառնում, այլևս մարգինալ չի համարվում:

1990-ականների կեսերին հեռուստատեսությամբ տարբեր հաղորդումներ են հեռարձակվում, որտեղ հրավիրվում են ռաբիս երգերի կատարողներ, թողարկվում են ալբոմներ և ձայնաժապավեններ, այս ժանրի շատ երգեր դառնում են հիթեր:

2000-ականների կեսերին ռաբիսի ժողովրդականությունը հասնում է գագաթնակետին: Ի հայտ է գալիս ռաբիսի ենթաժանրը՝ էստրադային ռաբիսը (հաճախ այն անվանում են նաև հայկական փոփ երաժշտություն), որի կատարումը նման էր

դասական ձևին, բայց առանձնանում էր ավելի մեղմ հնչողությամբ և համադրում էր էլեկտրոնային երաժշտությունը այլ երաժշտական ժանրերի հետ:

Քննադատների կարծիքով, ռաբիսն արաբական կամ թուրքական ծագում ունի: Ռաբիսը սովորաբար կատարվում է նվագախմբի հետ, որը բաղկացած է վոկալիստից, ստեղնահարից, դուդուկահարից կամ կլառնետահարից (կամ երկուսն էլ) և դհոլահարից:

Վերջին տարիներին նկատվում է ռաբիսի և այլ ժանրերի միավորում՝ փոփ, հիփ-հոփ, էլեկտրոնային պարային երաժշտություն և այլն:

Ռաբիս երգերը հիմնականում սիրո (այդ թվում՝ անպատասխան սիրո), կարոտի, տխրության, վշտի ու ցավի մասին են:

Հայաստանից դուրս ռաբիսը տարածված է հայկական սփյուռքի շրջանում, հատկապես Ռուսաստանում և ԱՄՆ-ում (հիմնականում՝ Լոս Անջելեսում և Գլենդեյլում):

Ռաբիս ժարգոնը պարունակում է ինչպես ընդհանուր ժարգոնային արտահայտություններ, այնպես էլ փոխառություններ օտար լեզուներից և հատուկ հասկացություններից: Օրինակ՝

- քյարթու — ռաբիսի հասկացությունների համաձայն՝ ապրող մարդ
- ցավդ տանեմ
- սրտիդ մեռնեմ
- կյանք ջան — կոչ սիրելիին կամ գրավիչ աղջկան
- նանար — գեղեցկուհի
- կայֆոտ — լավ, զիլ
- լոքշ — ձանձրույթ
- նատուրի — իսկապես
- անկապ — անիմաստ